

ԱՆԼՈՒԵԼԻ ՉԱՆԳԱԿԱՏՈՒՆ
(Հատուած)

Դու մեր հաստատ Մասիս սարը՝
Վստահելի թոկունքն ես մեր,
Մեր երգերի Ծովասարը ու Բինգէօլեան ակունքն ես մեր,
Մեր արնոտուած հաւքի լեզուն,
Մեր կարօտած ֆիտան եարը,
Մեր լեփլեցուն հոգիների ձայնատարը,
Մեր երգերի խա՛ղը-նոթա՛ն-ձայնատա՛ռը,
Չայնասրփի՛ւռը կենդանի
Ու ձայների թանգարա՛նը,-
Մեր հայկական երգարա՛նը...

...

Եւ մեզանից արդ ընդունիր
Երախտիքի այս խաչքո՛ւռը,
Այս խաչքուռը՝ ք՛ն իսկ հերկի:

Ընդունիր դո՛ւ,
Դո՛ւ մեր երգի
Մշտահնչին նուագարան.
Ընդունիր դու՛
Մեր ցարուցիք
Մասունքների հաւաքարա՛ր.
Դու՛ խազերի մեր քերական,
Դու՛ հոգետր մեր շարական
Դու՛ սրբարան
Մի աւագան,

Որ մեր հոգին ախտահանեց,
Դու՛ բիրլիական մի գաւագան,
Որ ուր դիպաւ՝ աղբիւր հանեց,
Դու մի կարօտ ու մեր մորմոք
Մեր տաղի քուրմ,
Մեր խաղի մոզ,
Մեր մշտահունչ ու մըշտարթուն
Անլուելի զանգակատո՛ւն...